




ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ԼՈՐՏ ՓԼԱՄՊ ՔՈԼԵԾԻԼԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ

Սթրազպուրկ

Ձերդ Գերազանցություն,

Սոյն Մեր գրով երջանիկ ենք ողջունելու Ձեզ, Երոպական Պառլամենտի նախագահի պատուաւոր պաշտօնին ընտրուելու առթիւ, այն համոզումով, թէ միջազգային այս ֆորումից Ձեր հովանու ներքոյ բարձր պիտի հնչի երոպական ազգերի ձայնը՝ ի խնդիր մեր օրերի մարդկութեան առջև դրուած բախտորոշ հարցերի խաղաղ ու արդար լուծման:

Աստուծոյ ողորմութեամբ Մենք, իբրև Պատրիարք-կաթողիկոս Հայ Առաքելական Եկեղեցու և հոգևոր պետը աշխարհի բոլոր հայերի, Ձեզ ենք դիմում և Ձեր ուշադրութեանն ենք յանձնում, որ յառաջիկայ Յունիս խմսին Երոպական Պառլամենտի օրակարգի վրայ պիտի դրուի 1915—16 տարիներին հայ ժողովրդի ընդհանուր կոտորածի հարցը ամբողջ Օսմանեան կայսրութեան տարածքի վրայ, սխտեմատիկ կերպով կազմակերպուած ու գործադրուած, որին զոհ է գնացել մօտ երկու միլիոն խաղաղ հայ լազաբնակչութիւն, մի կազմակերպուած կոտորած, որով բնաջնջուել է մի ամբողջ ժողովուրդ իր իսկ պատմական հայրենիքի հողի վրայ: Երազրուել ու գործադրուել էր մի իսկական ցեղասպանութիւն:

Բազմահազար վաւերական փաստաթղթեր, յատկապէս Մենն Բրիտանիոյ, Միացեալ Նահանգաց, Ֆրանսիայի և Ռուսաստանի արտաքին գործոց մինիստրութիւնների նրխիւներում վկայում են այդ մասին:

Բազմաթիւ անգլիացի, ամերիկացի, ֆրանսիացի և գերմանացի հեղինակներ և պաշտօնական պետական հրատարակութիւններ նոյնպէս ճշգրիտ վկայութիւններ են հրապարակել, սկսած 1916 թուականից մինչև մեր օրերը:

Հայոց ցեղասպանութեան մասին յիշենք այստեղ միայն մեծ վկայութիւններից՝ անգլիական կառավարութեան «Կապոյտ Գիրքը», լոյս ընծայուած 1916-ին, և Լորտ Պրայսի պատմական ճառը, խօսուած Բրիտանական Պառլամենտում 6 Հոկտեմբեր 1915-ին, որը հրատարակուել է նոյն ցեղասպանութեան մասին պատմաբան Առնոլտ Թոյնպիի ծանօթ գրքում:

Այդ գրքում Լորտ Պրայսը վկայում է, թէ՛ «Պատմութեան մէջ չկայ օրինակ նման մի կոտորածի այն երկրի մէջ, որ տարածւում է Պարսկաստանի սահմաններից մինչև Մարմարա ծով»: Նոյն իր ճառում Լորտ Պրայսը եզրակացնում է. «Կան ոճիրներ, որոնք չեն կարող հանդուրժուել աշխարհի վիրաւորուած հանրային կարծիքի կողմից»:

Կարծում ենք, որ արդարությունը պահանջում է, որ 1915—16 տարիներին տեղի ունեցած հայոց ցեղասպանությունը միջազգային ճանաչման արժանանայ և արձանագրոյի իբրև մեր դարի մեծագույն ողբերգություններից մէկը, որով, այո, մի ամբողջ ժողովուրդ արմատախիլ է արուել իր պատմական բնակավայրերից և կոտորուել Օսմանեան կայսրութեան կառավարութեան ծրագրումով ու կազմակերպումով:

Հայ ժողովուրդը, սրբազան իրաւունքն ունի սպասելու, որ քաղաքակիրթ աշխարհը, Եւրոպական Պառլամենտի բարձունքից հաստատի ու հռչակի այդ ցեղասպանութեան խրաքը, հանդիսանալով խղճի ձայնը մեր օրերի մարդկութեան, յստակօրէն ճշտելով, որ 1915—16 թուականներին կատարուածը, արդար է բանաձեւ որպէս մի իրական և ամբողջական ցեղասպանութիւն» և ոչ թէ այն նկատել լոկ «անարդարութիւն», ինչպէս քուէարկուած էր Եւրոպական Պառլամենտի Քաղաքական Յանձնաժողովի 25 Փետրուար 1987 նիստում (Յօդ. թիւ 1):

Այս առթիւ Ձեր բարձր ուշադրութեանն ենք յանձնում նաև այն, որ վերոյիշեալ Քաղաքական Յանձնաժողովի 25 Փետրուար նիստում, հայկական ցեղասպանութեան մասին քուէարկուած թիւ 5 երկու յօդուածների բանաձեւի մէջ ակնարկ կայ՝ մեր օրերի վերածնունդ ծաղկեալ հայկական Հանրապետութեան՝ Սովետական Հայաստանի ներքին ընկերային կեանքին, ինչ որ Մենք գտնում ենք անհիմն, և որ միայն կարող է վնաս հասցնել հայ ժողովրդի արդար դատի լուծմանը:

Եւ տակաւին նոյն բանաձեւի մէջ կան մի քանի անճիշտ ու արտառոց արտայայտութիւններ, ինչպէս օրինակ յօդուած Բ-ի վերջում, ուր խառնած է. «Եզրակացում է հայ ժողովրդի պատմութեան՝ թուրք ժողովրդի պատմութեան մէկ մասնիկը լինելը», որով Քաղաքական Յանձնաժողովի քուէարկուած բանաձեւը աւելի հակահայ մի փաստաթղթի տպաւորութիւն է թողնում:

Այս իրողութիւնները Ձեր 'ազնի ուշադրութեան յանձնելով, Մեր վստահութիւնն ենք յայտնում, թէ Եւրոպական Պառլամենտի յարգարժան երեսփոխանները ամենայն խոսրկայականութեամբ ի նկատի կ'առնեն դրանք:

Եւ Մենք վստահ ենք, թէ կը գայ օրը, երբ հայ և թուրք ժողովուրդների նոր սերունդները միատեղ կ'աղօթեն 1915-ին նահատակուած խանեղների համար:

Այսօր, մեծայարգ Լորտ, Ձեր հեղինակաւոր նախագահութեան ներքոյ Եվրոպայի Պառլամենտը, հայոց ցեղասպանութեան իրողութեան ճանաչումը հռչակելով, պատմական մի մեծ ծառայութիւն մատուցած պիտի լինի՝ հայ և թուրք ժողովուրդների ապագայ համերաշխութեան և բարի դրացիութեան ի խնդիր, ճշմարտութեան և արդարութեան լոյսի տակ:

Թող Աստուած Ձեզ գօրացնի և օգնական մնայ ու օրհնի Ձեր առաքելութիւնը:

Թող «Արդարութիւն և խաղաղութիւն համբուրեցին» (Սաղմ. 85.11): Խորին յարգանքով և ամենաբարի մաղթանքներով՝

ՎԱԶԳԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

12 Մայիս 1987 թ.